

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔՈՒՄ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿՈՐ  
ՓՈՒՆԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՎԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Վանաձորի համայնքապետարանը հայտարարում է Վանաձոր քաղաքում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ թափուր ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիների համար՝

NN ը/կ	ԵՐԹՈՒՂՈՒՄ				
	անվանումը և համարը	սկզբնակետը	վերջնակետը	տեսակը (ավտոբուսային/ միկրոավ- տոբուսային)	սպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը (ներառյալ պահուստային ավտոբուսների թիվը)
1.	N5 <sup>ա</sup> (Բազում թաղ.-Տարոն-2 թաղ.)	Վ.Համբարձումյան 92.	Շիրակի խճ. 50	միկրոավտոբուսային	12
2.	N5 <sup>բ</sup> (Բազում թաղ.-Տարոն-3 թաղ.)	Վ.Համբարձումյան 92.	Տարոն-3, քՇՀ 362.	միկրոավտոբուսային	12
3.	N9 (Երկաթուղային կայարան – Բուսաբանական այգի)	Երկ.կայարան	Բուսաբանական այգի	միկրոավտոբուսային	2

Ց Ա Ն Կ  
ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

- Հայտ.(ՁԼ N 2):
- Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման լիցենզիա:
- Կազմակերպության պետական գրանցման վկայական:
- Միկրոավտոբուսների տեխնիկական անձնագրեր (գրանցման վկայագրեր):
- Միկրոավտոբուսներին ամրակցված վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ:
- Միկրոավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր:
- Միկրոավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:
- Միկրոավտոբուսի վարորդի՝ սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ օրինականությունը հաստատող փաստաթուղթ:
- Միկրոավտոբուսների նախաուղերթային տեխնիկական զննման և բուժզննման աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը և հիմքերը՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում:
- Կազմակերպության շարժական կազմի հավաքակայանի սեփականության (օգտագործման) իրավունքի պետական գրանցման վկայական՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում:
- Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի փոխադրման գինը:  
Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից տսնծված, կնքված և ստորագրված փաթեթով: Փաթեթի փաստաթղթերը պետք է նույնպես կնքված լինեն հայտատու կազմակերպության կողմից «Իսկականի հետ ձիշտ է» գրառմամբ և ստորագրությամբ ինչով հավաստվում է դրանց իսկությունը:  
Մրցույթի անցկացման օրը, ժամը և վայրը - (թիվ 5<sup>ա</sup>, 5<sup>բ</sup> և 9 երթուղիները) 26 /11/2018թ. –ին ժ.10<sup>00</sup>,ք.Վանաձոր, Վարդանանց1<sup>ա</sup>:
- Հայտը ներկայացնելու վայրը, օրերը, ժամերը, վերջին ժամկետը - ՀՀ Լոռու մարզ, Վանաձորի համայնքապետարան (ք.Վանաձոր,Տ.Մեծի պողոտա 22) թիվ 209 աշխատասենյակ,աշխատանքային օրերին ժամը 9<sup>00</sup>-18<sup>00</sup>(13<sup>00</sup>-14<sup>00</sup> ընդմիջում) մինչև 16/11/2018թ.,ժամը 18<sup>00</sup>:
- Հեռախոսահամարը՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար՝ (041)11-99-11
- Մրցույթն անցկացվում է ՀՀ կառավարության 2001թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշման պահանջների համաձայն:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝



(ստորագրությունը)

Մամիկոն Ասյանյան  
(անունը, ազգանունը)